ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի շրջանակներում

ԱՌԱՐԿԱ Անգլերեն

ՂԵԿԱՎԱՐ Կիմա Օհանեսյան, երկրորդ խումբ

ՀԵՂԻՆԱԿ Հերսիկ Հարությունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 8

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզանից յուրաքանչյուրն ունի իրավունքներ: Դրանք մեզ ոչ ոք չի նվիրել և ոչ ոք չի կարող մեզանից խլել: Օրինակ՝ յուրաքանչյուրս ունենք կյանքի, ազատության, բարեկեցության, կրթության, աշխատանքի և շատ ու շատ այլ իրավունքներ: Բայց երբ խոսում ենք մեր իրավունքների մասին, պետք է հիշենք, որ ունենք նաև պարտականություններ:

Աշակերտներին անհրաժեշտ է իրազեկել իրենց իրավունքների և այդ իրավունքների իրականացման հնարավորությունների մասին. այդ դեպքում երեխաները կկարողանան պատշաճ իրացնել իրենց իրավունքները, չխախտել և պաշտպանել այլ երեխաների իրավունքները, ինչպես նաև լինել իրավագիտակից ու սեփական վարքագծի նկատմամբ պատասխանատու քաղաքացիներ: Այդ գործում անչափ կարևոր է նաև մեր՝ ուսուցիչներիս մասնակցությունը, քանի որ երեխաների՝ որպես անհատականությունների կայացման գործում անգնահատելի է ուսուցչի դերը: Երեխան դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իր ազատությունների ու պատվի, արժանապատվության պաշտպանությունը: Ուսուցչի հետևողական աշխատանքի և խիստ ուշադրության արդյունքում սովորողը կհասկանա և կկարողանա իր տարիքին համապատասխան հստակ պատկերացնել իր իրավունքներն ու պարտականությունները:

Արդյունավետ ուսուցումն առանց սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության, ինչպես նաև պարտականությունների կատարման անհնար է: Բոլոր աշակերտները՝ անկախ մտավոր, ֆիզիկական, հոգեկան առանձնահատկություններից պետք է կարողանա «օգտագործել» իր իրավունքներն ու ազատությունները և մշտապես հիշի. «Իմ իրավունքներն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են դիմացինի իրավունքները»:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության նպատակն է բացահայտել անգլերեն առարկայի դասավանդման շրջանակներում սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության ներկայացման և ուսուցանման եղանակները:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոլոր երեխաներն օժտված են իրավունքներով, և պետությունները պարտավոր են պաշտպանել երեխայի իրավունքները: Իսկ երեխաների իրավունքները պաշտպանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բարձրացնել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Յուրաքանչյուր ոք, առաջին հերթին՝ երեխաները, ծնողներն ու երեխաների հետ աշխատող մեծահասակներն ունեն երեխայի իրավունքներն ուսումնասիրելու կարիք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թե՛ երեխաներին և թե՛ մեծահասակներին հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու երեխայի իրավունքները: ՀՀ-ում երեխաների իրավունքներն ու ազատությունները կանոնակարգվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Երեխայի իրավունքների մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներով:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի[1] համաձայն Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված համապատասխան պետական մարմինները: Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց եւ ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

Հոդված 22-ը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի պատվի եւ արժանապատվության պաշտպանության իրավունք: Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության եւ հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրացնելիս չի կարող ենթարկվել կամայական,

[1] ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին», Ընդունվել է 29.05.1996թ., հոդված 4: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1700&lang=arm 28.09.2023թ.

ապօրինի միջամտության կամ իր պատվի եւ արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստություններում երեխայի ուսուցումը եւ դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա: Երեխայի պատվի եւ արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը եւ ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի[2] 5-րդ գլուխն ամբողջությամբ վերաբերում է ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցներին, նրանց իրավունքների ու պարտականությունների սահմանմանը: Օրենքի համաձայն ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցներն են՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները:

Կրթական գործընթացի մասնակիցներ են համարվում ուսումնադաստիարակչական աշխատանքների հետ անմիջական առնչություն չունեցող, սակայն դպրոցի կառավարման համար պատասխանատու անձինք՝ խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլոք: Օրենքի մակարդակով առաջին անգամ մանրամասն ամրագրված է սովորողների իրավունքներն ու պարտականությունները: Բացառված է որևէ խտրականություն՝ ուսումնական հաստատություններում բոլոր սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ որոնք սահմանվում են ոչ միայն օրենքով, այլև ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Օրենքի համաձայն սովորողն իրավունք ունի՝

[2] ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», Ընդունված է 2009 թվականի հուլիսի 10-ին https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 28. 09. 2023թ.

1. ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն,
2. ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ,
3. անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից,
   3.1 ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն,
4. մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների,
5. պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,
6. ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը,
7. ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,
8. օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Դրա հետ մեկտեղ սովորողներն օրենքով սահմանված պարտավորություններ ունեն, դրանք են.

- կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,
- ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները,

- հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին,
- կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Ամփոփելով, նշենք, որ մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

  - հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.
  - նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը, հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները.
  - նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը,
  - սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ, դաստիարակել հայրենասիրություն,
  - սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Անդրադառնանք սովորողների ազատության, պատվի և արժանապատվությանը: Ազատությունը գաղափար է, որը արտացոլում է անձանց վերաբերմունքը ինչ-որ գործողությունների նկատմամբ: Ըստ Շիլլինգի ազատությունը բարու և չարի տարբերակել կարողանալու հիման վրա ընտրություն կատարելու կարողությունն է:

Էթիկայում ազատությունը կապված է մարդու մոտ կյանքի ազատության առկայության հետ: Վերածննդի դարաշրջանում և հետագա դարերում ազատություն ասելիս հասկանում էին մարդու անհատականության անարգել, բազմակողմանի ուսումնասիրությունն ու բացահայտումը:

Գերմանական կրոնի ու փիլիսոփայության մեջ, ազատության հարցը դիտարկվում է որպես մարդու բարոյաստեղծագործական բնույթի բացահայտում: Սպինոզան ազատությունը սահմանում է որպես սեր Աստծո հանդեպ և Աստծո սերը մարդու հանդեպ: Սրանից մենք պարզ հասկանում ենք, թե որն է մեր փրկությունը կամ երանությունը կամ ազատությունը: Այն Աստծո հանդեպ մշտական և հավերժական սիրո կամ մարդու նկատմամբ Աստծո ունեցած սիրո մեջ է:

Մտքի ազատություն, խղճի ազատություն կամ գաղափարի ազատություն, այն հիմնարար սկզբունքներից մեկն է, որը բնորոշ է ժողովրդավարությանը: Այն ուրիշների կարծիքներից անկախ անձնական տեսակետ, կարծիք կամ մտքեր ունենալու անձի քաղաքական ազատությունն է:

Արժանապատվությունը այն հիմքն է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում: Այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Արժանապատվությունը ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը և հասարակության վերաբերմունքը իր հանդեպ, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Այն զուտ մարդկային հատկանիշ է և ձեռք է բերվում մարդու զարգացման որոշակի շրջանում:

Արժանապատվությունն ու պատիվը այնպիսի կատեգորիաներ են, որոնց վերաբերյալ միանշանակ և հստակ սահմանումներ առկա չեն՝ հասկանալի պատճառներով: Ինչպես նշել է Հեգելը, որքան հարուստ է բնորոշմանը ենթակա առարկան, որքան ուսումնասիրման

ենթակա տաբեր կողմեր ունի, այնքան ավելի տարատեսակ են դրան տրվող բնորոշումները: Արժանապատվությունը, ինչպես և պատիվը, առաջին հերթին բարոյագիտական պատկերացումներ են: Դրանք դասվում են այն երևույթների շարքին, որոնք հոգեհարազատ են յուրաքանչյուրի՝ ամենից առաջ զգայական մակարդակի շնորհիվ: Առաջին հայացքից թվալով շատ մատչելի մեր հասկացողությանը՝ դրանք այնքան բազմաբովանդակ են, որ իրենց արմատներով ձգվում են մինչև զգացողության ու գիտակցության խորքերը և իրենց ազդեցությունը տարածում են շատ ավելի լայնամասշտաբ, քան կարող է թվալ: Ներթափանցելով զգայության, գիտակցության և հետևաբար նաև գործունեության բազմապիսի ոլորտներ՝ դրանք ոչ հազվադեպ որոշիչ են դառնում այս կամ այն իրավիճակում:

Որպես արժանապատվության անհրաժեշտ պայման՝ հանրահայտ մտածող Ժ. Ժ. Ռուսսոն ընդգծել է. «Հրաժարվել սեփական ազատությունից՝ նշանակում է հրաժարվել մարդկային արժանապատվությունից, մարդկային բնության իրավունքներից և նույնիսկ պարտականություններից: Հնարավոր չէ որևէ հատուցում այն մարդուն, ով ամեն ինչից հրաժարվում է: Նման հրաժարումն անհամատեղելի է մարդկային բնության հետ, մարդուն կամքի ինքնավարությունից զրկելը հավասարազոր է նրա գործողությունները ցանկացած տեսակի բարոյականությունից զրկելուն»:

Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անքակտելի և անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը:

Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում: Շատ կարևոր է դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել պատիվ և արժանապատվություն, իրավունք և ազատություն: Դրա արդյունքում սովորողի մեջ բարձրանում է պատասխանատվության գիտակցումը:

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ արժանապատվությունը նաև բարոյագիտական հասկացություն է: Սեփական արժանապատվության ըմբռնումը,

խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը: Մյուս կողմից՝ անձի արժանապատվությունը մյուս մարդկանցից պահանջում է հարգել անհատին, ճանաչել նրա համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները:

Պատիվը իր արժանիքների համար մեկի վայելած հարգանքն է, փառքը: Ըստ Կ. Վեբերի բնորոշման պատիվը սահմանվում է որպես ճանաչված լինելու պահանջ հասարակության մեջ: Հարց է առաջանում՝ իսկ արդյոք անձի համար հարգվելու ձգտումը նույնանում է փառքի հասնելու ձգտման հետ, արդյոք խոսքը մարդկային միևնույն պահանջմունքի մասին է: Այս հարցին պատասխանելու համար կատարենք պատվի մասին հակիրճ պատմական էքսկուրս: Հիշենք, թե ինչպիսի թրթիռով էր վերաբերում աթենացին հասարակության կողմից իր հանդեպ տածած հարգանքին, ինչ անհաս բարձրության վրա էր դնում ձիթապտղի ճյուղը, որը տրվում էր հասարակական խաղերի լավագույն մասնակիցներին, հիշենք նաև, թե ինչպիսի ջանքեր էին գործադրում Հին Հունաստանի փիլիսոփաները համաքաղաքացիների կողմից իրենց որպես անհատականություն ճանաչելու համար: Ինչպես տեսնում ենք, նրանց հատուկ էր անհագ ձգտումը դեպի ճանաչում:

Հարգվելու պահանջմունքը ի սկզբանե ծագել է որպես սեփական արժեքի գնահատում, որպես ինքնահարգում: Ըստ հեղինակի հենց դրա մասին է խոսել Պլատոնն իր «Պետությունը» աշխատության մեջ, որտեղ առանձնացնելով հոգու երեք մակարդակներ, դրանցում ներառել է նաև այսպես կոչված «կատաղի ոգի»-ն, որը դրդում է մարդուն պայքարել փառքի հասնելու համար: Փառքին ձգտելու մասին խոսել է նաև Արիստոտելը՝ այն բնորոշելով որպես գլխավորապես պետական գործունեությամբ զբաղվող անհատների գերագույն նպատակ:

Անձը ձգտում է, որ իր մասին հանրության անդամները կազմեն դրական կարծիք: Իհարկե, այդ կարծիքը միշտ չէ, որ կարող է օբյեկտիվ լինել՝ հաշվի առնելով նախ այն, որ մեկի կողմից մյուսի մասին դատելը չի կարող անթերի լինել, քանի որ ճանաչման պրոցեսը ինքն իրենից բավականին բարդ գործընթաց է, և լիարժեք դիմացինին ճանաչելը հնարավորությունների սահմաններից դուրս է թվում, և բացի այդ անհատը կարող է շատ

հաճախ թաքցնել իր իրական մոտիվներն ու նպատակները՝ դրանով իսկ իր մասին թյուր կարծիք ձևավորելով հասարակության մեջ:

Մենք ապրում ենք այնպիսի դարաշրջանում, որի փոփոխությունների թափն ու արագությունը անընդհատ աճում են: Փոխվում է ոչ միայն աշխարհը, այլև նրա մասին մեր պատկերացումները: Դրա հետ մեկտեղ, շատ հաճախ չենք հասցնում ժամանակին գիտակցել այդ փոփոխությունների գործընթացի ամբողջ խորությունն ու էությունը, ինչն էլ մեզ ստիպում է նահանջել, զիջել դիրքերը մրցակցության պայքարում: Այս գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն առաջնորդություն: 21-րդ դարի քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուն, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ և հասնել դրանց, ի վիճակի լինեն արժևորել իրենց տեղն ու դերը հասարակության մեջ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի «Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի շրջանակներում» թեմայի ուսումնասիրության շրջանակներում, իրականացրել եմ հետազոտություն՝ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի սաների շրջանում, անգլերեն առարկայի շրջանակներում: Նշենք, որ 9-րդ դասարանում անգլերենի դասավանդումը նպատակաուղղված է.

- Սովորողի բանավոր և գրավոր հաղորդակցմանը, միջմշակույթային փոխըմբռնմանը, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելուն:
- Ինքնուրույն ուսումնառության և ինքնազարգացման կարողությունների խթանմանը,
- Սեփական ուժերի և կյանքի հանդեպ վստահություն, ինքնագնահատման կարողության, ինքնաճանաչման ձգտմանը,
- Վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողության, նորի հանդեպ բաց և անկողմնակալ մոտեցում, կենսական խնդիրների լուծմանը ճանաչողական և ստեղծագործական մոտեցմանը,
- Ազատ և ինքնուրույն որոշումներ կայացնելու , դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամությանը:

Առարկայի դասավանդման ընթացքում անչափ կարևոր է ուսուցչի կողմից կիրառվող համապատասխան մեթոդների ,ճիշտ ու տեղին ընտրությունը:Նախագծերի մեթոդը իր նշականությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, այն 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ:

Սովորողներին անգլերեն առարկայի ուսուցման ժամանակ ցուցաբերվում է հետևյալ մանկավարժական մոտեցումները.

- Օտար լեզվի ուսուցումն իրականացվում է նախագծային աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներով:
- Դասավանդող-սովորող, սովորող-սովորող իրավիճակային երկխոսությունների ստեղծում, իմաստի որոնում. (իմաստը չի տրվում պատրաստի ձևավորված վիճակում: Դրան աշակերտը հասնում է որոնելով, կշռադատելով):
- Սովորողներն իրենք են եզրահանգում անում, իսկ Ես տալիս եմ առաջնային գաղափարներ:
- Հաշվի եմ առնվում սովորողի կարծիքը:
- Լեզվամտածողության զարգացումը կազմակերպելու համար աշխատում եմ համագործակցային և խմբային հետազոտական մեթոդով:

Սովորողների մոտ իրենց սեփական իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման նպատակով, ընտրել եմ “More facts on the USA” թեման: Երեխաների հետ քննարկում ենք, թե ինչի հետ են ասոցացնում ԱՄՆ-ն: Սովորողներն առաջինը նշում են ազատությունը, ըստ նրանց ԱՄՆ ազատության և իրավունքների երկիր է: Այնուհետև սովորողներին առաջարկում եմ տեքստն ընթերցելու ընթացքում գտնել և ընդգծել տեքստի բովանդակության համար առանցքային բառերը և նախադասություններն ու պարբերությունները: Առաջարկում եմ տեքստի ընթերցումից հետո պատասխանել տրված տարաբնույթ հարցերին: Աշակերտներին առաջարկում եմ սեփական մտքերը շարադրելով, պատասխանել հետևալ հարցերին.

1. How can you protect your rights?
2. What does freedom mean to you?
3. What is honor?
4. What is Dignity and What Does it Have to Do With Our Rights?

Նմանատիպ քննարկումները անպայման կապահովվեն սովորողների իրավունքների իմացության բարձրացմանը, ազատության, պատվի և արժանապատվության վերաբերյալ

ճիշտ ընկալումների ձևավորմանը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս սովորողների ճանաչողական հմտությունների զարգացումը, նրանց գիտելիքները ինքնուրույն կառուցելու և տեղեկատվական տարածքում նավարկելու կարողությունը, ստեղծագործական մտածողության զարգացումը: Աշակերտը դառնում է ուսուցման ակտիվ, հետաքրքրված, հավասար մասնակից: Նա ունի ստանդարտ մտածողությունից շեղում, գործողությունների կարծրատիպ, որը թույլ է տալիս զարգացնել սովորելու ցանկությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարված հետազոտությունը, պետք է փաստել, որ սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը:

Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում:

Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

Օրենքները չիմանալը չի ազատում պատասխանատվությունից, ուստի անհրաժեշտ է աշակերտներին դեռ մանկուց իրազեկել հասարակական կարգ ու կանոնի, օրենքի, իրավունքի ու պարտականության, հավասարության և արդարության կարևորության մասին: Լինելով արժանապատիվ սովորող՝ նա կարող է ուսուցման մեջ ապահովել հաջողություններ: Դասապրոցեսում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ սովորողը հաճույքով հաճախի դպրոց և, որ ամենակարևորն է, զգա, որ իր իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանված է: Այդժամ նա լիարժեք կկատարի իր պարտականությունները: Բնականաբար այդ ամենին հետևողն ու հիմնական նպաստողը ուսուցիչն է: Այսպիսի դասընթացները պահանջում են ավելի մեծ պատրաստվածություն: Այսինքն՝ բավարար չէ միայն բովանդակության մատչելի ներկայացումը, անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը կդառնա դասապրոցեսի անմիջական մասնակիցը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին», Ընդունվել է 29.05.1996թ.,
2. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», Ընդունված է 2009 թվականի հուլիսի 10-ին
3. Лавренов А.Ю. Интернет для учителя. Пособие для системы доп. проф. образования / А.Ю. Лавренов [и др.]. М.: Федерация Интернет Образования, 2005. 93 с.
4. Суходимцева А. П. Обновление методов обучения в аспекте методологии учебной деятельности / А. П. Суходимцева // Преподавание истории и обществознания в школе, 2017, № 6,
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 28.09.2023թ.
6. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1700&lang=arm 28.09.2023թ.